ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 352 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 860-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով ու հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 860-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 6-րդ կետից հանել «, Պետական պահպանության ծառայության գրասենյակը» բառերը.

2) 16-րդ կետի՝

ա. 9-րդ ենթակետը «փոխանցման համակարգերի,» բառերից հետո լրացնել «տեղեկատվական անվտանգության ապահովման և» բառերով,

բ. 14-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) տեղեկատվական անվտանգության ապահովման աշխատանքների իրականացման համակարգող լիազոր մարմին հանդիսանալը, օրենքով սահմանված կարգով պետական վերահսկողության իրականացումը.»,

գ. 14-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-14.6-րդ ենթակետերով.

«14.1) իր իրավասության սահմաններում պետական մարմինների պաշտոնական կայքերի, էլեկտրոնային հարթակների և այլ տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական ենթակառուցվածքների տեղեկատվական անվտանգության (այդ թվում՝ կիբեռանվտանգության) ապահովումը.

14.2) պետական մարմինների տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական ենթակառուցվածքների համակարգչային միջադեպերին արձագանքելու աշխատանքների համակարգումը.

14.3) մասնակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական ենթակառուցվածքների, ազգային անվտանգության համար ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկատվական ենթակառուցվածքների տեղեկատվական անվտանգության (այդ թվում՝ կիբեռանվտանգության) նորմերի մշակմանը.

14.4) պետական մարմինների տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական ենթակառուցվածքների, ազգային անվտանգության համար ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկատվական ենթակառուցվածքների տեղեկատվական անվտանգության (այդ թվում՝ կիբեռանվտանգության) նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողական գործառույթի իրականացումը.

14.5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկատվության գաղտնագրային և տեխնիկական պաշտպանության ընագավառի գործունեության համակարգումը.

14.6) Հայաստանի Հանրապետությունում տեխնիկական հետախուզություններին հակազդման կազմակերպման միասնական կարգի մշակումը, որը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ.»,

դ. 15-րդ ենթակետում «տեխնոլոգիաների, տեղեկատվական-հեռահաղորդակցական» բառերը փոխարինել «և հեռահաղորդակցական» բառերով,

ե. 17-րդ ենթակետում և 21-րդ կետի 20-րդ ենթակետում «քաղաքացիական անձնակազմի» բառերը փոխարինել «քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց» բառերով.

3) 18-րդ կետի 1-ին և 21-րդ կետի 11-րդ ենթակետերից հանել «, Պետական պահպանության ծառայության գրասենյակի» բառերը.

4) 21-րդ կետի՝

ա. 26-րդ ենթակետում «քաղաքացիական անձնակազմի անդամների» բառերը փոխարինել «քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց» բառերով,

բ. 27-րդ ենթակետում «քաղաքացիական անձնակազմին» բառերը փոխարինել «քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց» բառերով,

գ. 34-րդ ենթակետում «սոցիալական պաշտպանվածության» բառերը փոխարինել «սոցիալական ապահովության» բառերով.

5) 23-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «Պետական պահպանության ծառայության գրասենյակին,» բառերը.

6) «VI. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ» գլուխն ուժը կորցրած ճանաչել:

2. Հույժ գաղտնի:

3. Հույժ գաղտնի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ